# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՆՇԱՆ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՆՇԱՆ ՏԷՐՏԷՐԵԱՆ, ՈՐ Ի ԳՈՍԹԱ ՄԵՍԱ, ԿԱԼԻՖՈՌՆԻԱ

Համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Յարգարժան պրն Տէրտէրեան, ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանից տեղեկացանք, որ Դուք Ձեր Տիկնոջ հետ միասին բարի եւ աստուածահաճոյ գործերում մշտապէս միմեանց զօրակից, Ձեր գովելի աւանդն էք բերում ԱՄՆ հայոց Արեւմտեան Տիրախնամ թեմի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու շինութեանն ու պայծառութեանը:

Արդարեւ, Ձեր յանձնառութիւնները մեր Սուրբ Եկեղեցու կեանքում, մեծագումար նուիրատուութիւնները Երուսաղեմի եւ Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքութիւններին, ԱՄՆ Արեւմտեան եւ Արեւելեան թեմերի եկեղեցիներին ու Ազգային հաստատութիւններին խօսուն արտայայտութիւնն են առ Աստուած Ձեր հաւատի եւ առ լուսաւորչապատկան մեր Սուրբ Եկեղեցին Ձեր որդիական սիրոյ:

Մեծ է հայորդուդ վաստակը յատկապէս Վէն Նայսի Սուրբ Պետրոս եւ Գոսթա Մեսայի Սուրբ Աստուածածին եկեղեցիների կեանքում: Տասնամեակներ շարունակ Դուք յանձն էք առել ինչպէս վարչական ծառայութիւններ, այնպէս եւ Ձեր նիւթական աջակցութիւնը բերել եկեղեցիներին՝ հաւատաւոր ու ծառայասէր Ձեր ընթացքով արժանանալով եկեղեցու հոգեւոր դասի եւ հայորդեաց անկեղծ սիրոյն ու յարգանքին:

Ուրախ ենք նշելու, որ ի յաւելումն Ձեր բազում եկեղեցաշէն գործերի, Դուք մեծագումար նուիրատուութեամբ Ձեր մասնակցութիւնն էք բերել ԱՄՆ հայոց Արեւմտեան Տիրախնամ թեմի առաջնորդանիստ Մայր եկեղեցու կառուցմանը՝ դառնալով եկեղեցու կնքահայրերից մէկը:

Բարձր գնահատելով Ձեր մատուցած ծառայութիւնները մեր Սուրբ Եկեղեցուն, սիրով ընդառաջում ենք Ձեր բարեջան առաջնորդի խնդրանքին եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

**ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ**

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Տիրոջ հանապազ օրհնութեամբ լինէք միշտ եռանդուն ու կորովաշատ եւ շարունակէք Ձեր գնահատելի ծառայութիւնը բերել Մայր Եկեղեցուն եւ հաւատաւոր ժողովրդին:

Մեր մաղթանքն է նաեւ, որ Բարձրեալ Տէրը զօրացնի համայն մեր ժողովրդի եկեղեցասիրութեան եւ հայրենանուիրումի ոգին՝ Իր հանապազ հովանու ներքոյ միշտ առաջնորդելով մեծարժան գործերի:

*Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանն. Ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 13-ն Յուլիսի
յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 242